ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի համագործակցության շրջանակներում իրականացվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» ընթացքի վերաբերյալ՝ 2016 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ

Նշված ժամանակահատվածում «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ծրագրի բաղադրիչ հանդիսացող՝ «Կորպորատիվ զարգացում, շահառուների մասնակցություն և համայնքային աջակցություն» ծրագրի շրջանակներում՝ դանիական «Քովի» խորհրդատվական ընկերության կողմից իրականացվել են մեկնարկային փուլի ուսումնասիրություններն ու միջոցառումները: Մասնավորապես. կատարվել են երկու մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ընկերություն ստեղծելու, իրավական և ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրություններ, ինչպես նաև կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ ու քննարկումներ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ, այդ թվում ծրագրում ներառված 12 քաղաքային համայնքների ներկայացուցիչների հետ:

Նշված քննարկումների, ինչպես նաև իրավական ու ինստիտուցիոնալ դաշտերի ուսումնասիրության արդյունքներով՝ ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի 12 քաղաքային համայնքների ավագանիների որոշումներով ստեղծվել է Ծրագրով նախատեսվող՝ ԿԿԹԿ և նոր կառուցվող աղբավայրի շահագործման «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի հիմնադիր ժողովը կայացել է 2016 թվականի սեպտեմբերի 20-ին՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանում:

Նշված ընկերությունը պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության նախարարության ձեռնարկությունների ռեգիստրում՝ 2016 թվականի սեպտեմբերի 24-ին: Ընկերությունը 2016 թվականի սեպտեմբերի 30-ին ՀՀ ֆինանսների նախարարության հետ կնքել է ենթավարկային պայմանագիր:

2. Ծրագրի բաղադրիչ հանիսացող՝ «Ծրագրի իրականացման աջակցություն» ծրագրի շրջանակներում ավստրիական «Հիդրո Ինջիներինգ» խորհրդատվական ընկերության կողմից իրականացվել են ուսումնասիրություններ աղբավայրերի նախագծման, կառուցման և շահագործման իրավական, ինստիտուցիոնալ և տեխնիկա-տնտեսական ասպեկտներով: Կատարվել է տեղանքի ուսումնասիրության, ինչպես նաև մշակվել են նոր կառուցվող աղբավայրի 3 բջիջների նախնական նախագծերը: Փորձագետների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել և հստակեցվել են միջազգային ստանդարտներին համապատասխան սանիտարական աղբավայրի նախագծման և շինարական աշխատանքներին, ինչպես նաև կազմակերպական ու գնումների գործընթացները 2016 թվականի դեկտեմբերին կազմակերպելուն վերաբերող հարցեր:

Հիդրո Ինջիներինգ խորհրդատվական ընկերության կողմից ներկայացվել է Ծրագրի նախնական հաշվետվության նախագիծը:

Ծանոթություն:

2014թ. հունիսի 16-ին ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նշանակվել էր «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման ծրագրի» 2-րդ փուլի միջոցառումների կազմակերպման նպատակով ծրագրի պատասխանատու:

Ծրագրի նպատակն է կառուցել և շահագործել ԵՄ չափանիշներին համապատասխան տարածաշրջանային աղբավայր Հրազդանում, որտեղ կհավաքվի ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում գոյացած աղբը:

Ծրագրի արժեքը՝ 11 մլն. Եվրո, որից 5,5 մլն. վարկային միջոց, 5,5 մլն. դրամաշնորհ:

Ծրագրի շահառուներ՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի, Բյուրեղավանի, Եղվարդի, Ծաղկաձորի, Նոր Հաճընի, Հրազդանի, Չարենցավանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի համայնքներ: